



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐԱՀԱՆԳ
ՏԵՐԵԿՈՆ ՀԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


≡ ՅԵԿ ≡

II

ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

ԱՄՍԱԿԱՆ ՈՊԵՐԱՑԻՈՆ—ՎԻՃԱԿԱԳՐԱ-
ԿԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԸ

ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



657
Հ-94

ՔԱՐԴԱՆԱՅԻՆ Վ. — Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅՏԱՐԱՐԿՈՒԹԻՒՆ»
1931 թ.

24 SEP 2013

1454
2013. 09. 24

657

2-94

ՀՐԱՀԱՆԳ

ԱՐՀԵՍՏԱԴՈՐԾԱԿՈՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ՎԱՐԿԱՅԻՆ ՅԵՎ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ
ԱՐՏԵԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ)



(6585-57)

25818-60

7005 932 42

24.763
17410.

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՈԼՈՐ
ՏԵՍԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

1

Տարեհաշվետվությունը լրացնելիս կլինեն դեպքեր, յերբ արտելն այս կամ այն գործառքը չի կատարել, վոր նախատեսնված են զանազան տախտակների առանձին սյունյակներում։ Որինակ՝ մի քանի արտել կարող է կապիտալ ներդրումներ չեն ունեցել կամ արտադրությանը պատրաստել միայն իրենց սեփական նյութերից և պատվիրատուներից նյութեր չեն ստացել։ Նման դեպքերում ավելորդ սյունյակները չնշվում են, իսկ ավելորդ չլրացված տախտակների վրա գրվում են, թե ինչ պատճառով են նրանք բաց մնացել։ Յեթե այդպիսի նկատողություններ և մակագրություններ բացակայում են, տարեհաշվետվությունը կհամարվի լրացված սիսալ և կվերադարձվի արտելին այն ուղղելու համար։

Տարեհաշվետվությունների բոլոր տախտակներում, բացի հաշվեկշռից և շահ ու վնասի հաշվից, գումարները ցույց են տրվում ոռուբլիներով առանց կոպեկների։ Բայց վորում 50 կոպեկից ավելին ընդունվում է 1 ռուբլի, իսկ 50 կոպեկտից պակաս գումարը դուրս է ձգվում։

Միավորի չափերը ցույց են տրվում մետրիքական չափերով-մետր . կիլոգրամ , տոն և այլն , իսկ հատով ապրանքները-զույգերով , տասնյակներով , հարյուրներով , հազարներով և այլն :

Տարեհաշվետվության դլիմին գրվում է , թե հաշվետվությունը վո՞ր ժամանակամիջոցի համար և կազմված : Այն արտեները , վորոնք իրենց գործունելությունը սկսել են վոչ հաշվետու տարեսկզբից , դլիմին գրում են իրենց գործունելության իսկական ժամանակամիջոցը (որինակ 15/III 30 թ . մինչև 1/1 31 թվի և այլն)

Այն արտելը , վոր դադարել և գործելուց հաշվետու ապրվա մեջ , հաշվետվությունը կազմում է լուծարքային հանձնաժողովը , դլիմին ցույց տալով նրա զործունելության ժամանակաշրջանը (որինակ 10/1 30 թ . մինչև 25/X 30 թվի և այլն) :

Այն արտելը , վոր հաշվետու տարում կազմվել և մի քանի արտեների միացումից , տալիս և միացյալ հաշվետվության , վորի մեջ մտնում են միացված արտեների դորժունելության և կազմակերպչական դրության տրվյալները մինչև նրանց ի մի ձուլվելը : Յեթե այդ միացումը կատարվել և տարելերջում , և արտելը հնարավորություն չունի միացյալ հաշվետվություն կազմելու և մի ձուլված բոլոր արտեների համար , նա պետք է ներկայացնե հաշվետվության յուրաքանչյուր միացված արտելի համար առանձին :

ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ № 1 ՁԵՎԻ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տախտակ № 1

Այդ տախտակում գրվում է 1-ին կետում գրվում ե արտելի լրիվ անունը , ցույց տալով արտադրությունը , որինակ . Զարինչի փայտա-յերկաթաղործական «Անիվ» արտել , Գորիսի փայտա-թիթեղուղործական «Գուղոկ» արտել և այլն

2-րդ կետում գրվում է Միության կամ վարկային ընկերության անունը , վորի անդամ հանդիսանում է այլայլ արտելը :

3-րդ կետում գրվում է վարչության բնակավայրը (հասցեն) , ըստ վորում , յեթե արտելը գտնվում է գյուղում , չնչվում և «քաղաք» խոսքը և ընդհակառակը : Երջանը ցույց է տրվում համաձայն վերջին վարչական բաժանման :

4-րդ կետում գրվում է այն հիմնարկի անունը , որ առաջին անգամ տոմարագրվել է արտելի կանոնադրությունը , ցույց տալով տոմարագրման թիվը (ամիս և թիվ) :

5-րդ կետում միևնույն և թե արտելը ինչ ձեռվ է գոյություն ունեցել կամ վերակազմվան յենթարկվել : Բոլոր գեպերում ել ցույց է տրվում առաջին անգամի տօմարագրման թիվը :

Տախտակ № 2

Այս տախտակում տեղեկությունները տրվում են միայն անդամների և թեկնածուների մասին , հաշվե-

լով նրանց թվում նաև այն ծառայողներին և աշակերտներին, վորոնք տվյալ արտելի անդամներ կամ թեկնածուներ են հանդիսանում:

Յ-րդ կետում ցույց է տրվում այն բատրակների և չըրավորների թիվը, վորոնք անդամագրվել են տվյալ արտելին հաշվետու տարում, 4-րդ կետում՝ գործադուրկների թիվը, վոր ընդունված են աշխարհայից համաձայն տեղական աշխատանքի մարմնի հետ կնքված պայմանագրի: 8-րդ կետում՝ այն անդամների թիվը, վոր արտելը հանձնել է պետարդյունարերությանը: Կամագոր կերպով արտելից հեռացած և հետագայում մասնավոր ձեռվ պետական ֆարբիկան աշխատանքի մտած անդամները, այսուղ ցույց չեն տրվում:

Տախտակ Նº 3

Այն արտելները, վորոնք մի քանի զանազան տեսակ արտադրություններ ունեն (յերկու կամ ավելի), այս տախտակում տեղեկությունները տալիս են/ամեն մի տեսակ արտադրության ճյուղի համար առանձին-առանձին: Արտադրության անունը ցույց է տրվում Ա.սյույակում համաձայն սոորաբաժանման (կլասիֆիկացիայի):

Առանձին ճյուղեր չպետք է հաշվել այն արտադրությունները, վորոնք այդ սոորաբաժանման մեջ չեն հեշտակված: սրբնակ: Կոչկակարության դադասովկայի ցեխի չպետք է ցույց տրվի իր առանձին արտադրություն: Բայց, յեթե, արտելն ունի թեկուղ իրար հետ կապված արտադրություններ, բայց նրանք նախատեսված են հիշված սոորաբաժանման մեջ, այն ժամանակ այդ արտադրությունները պետք է ցույց տալ առանձին-առանձին: Ավելի ես չոկ արտադրություններ

պետք է համարել այն ճյուղերը, վորոնք իրար հետ կապ չունեն, որինակ, ջուլհակության, գերձակության, կոչկակարության և այլն: Այս առանձները լավ պետք է յուրացնել և աչքի տուած ունենալ նաև տարհաշվետվության № 13, 14, 20, և 21 տախտակները լրացնելիս:

Տախտակում դրվում է ըստ առանձին ճյուղերի արտադրություններ դրազված անձանց թիվը, իսկ «ընդամենն արտադրություններ» դրազված» տողում ցույց է տրվում արտելի անդամներից և թեկնածուներից հետեւյալ անձինք. 1. արտադրությունից ազատված վարչության անդամները և մյուս վարչական անձնակազմը. 2. արտադրական և առեւտրական ձեռնարկներում, պահեստներում ծառայող արտելի անդամները և 3. նյութերը ու պատրաստի արտադրություններ փոխադրող անդամները, բացառությամբ անտառանյութերի և շինանյութերի արտադրությունների:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր առաջին սյունյակի գումարը հավասար չի լինի 2-ից մինչև 7 սյունյակների գումարներին, վորովհետեւ, ինչպես, որինակ, 2-րդ սյունյակում ցույց տրված կանայք կարող են յերկրորդ անգամ գրվել 3-րդ սյունյակում և յերրորդ անգամ 5-րդ սյունյակում, յեթե նրանցից մի քանիսը 23 տարեկանից ցածր տարիք կունենան կամ անդրագետ կլինեն:

Վարձու բանվորները և ծառայողներն ու արտելի անդամ չհանդիսացող աշակերտները 3-րդ տախտակում ցույց չեն տրվում:

Առաջին սյունյակի գումարը պետք է հավասար լի-

Նի 2-րդ տախտակի 10-րդ սյունյակին և 4-րդ տախտակի 12-րդ սյունյակին :

Տախտակ № 4

Այս տախտակը լրացվում է չետելյալ ձեզով . .

Անդամների սոցիալական կազմի ստուգման և հարցաթերթերում յեղած տեղեկությունների հիման վրա, արտելի քոլոր անդամները բաժանվում են այն խմբերի, վոր հիշված են 4-րդ տախտակի սյունյակներում : Յեթե այս կամ անդամի մասին արտելում ունեցած անդեկությունների ճշտության մասին կառկած է առաջանում, անհրաժեշտ է այդպիսի անդամներին նորից ստուգել և ապա անցկացնել այս կամ այն խմբի մեջ :

Յերեխանները և ընտանիքի մյուս անդամները, յեթե նրանք մինչև արտելին անդամագրվելիք չունեն ինքնուրույն վաստակ և ապրում ելին ծնողների մոտ, անց են կացվում նույն խմբի մեջ, ինչպես և նրանց ծնողները : Զեռնարկատերերի ինամբքին դանախող անձանց համար 4-րդ տախտակում հասկացված է առանձին սյունյակ 10 :

13-րդ սյունյակում պետք է դուրս ձգվեն «դեռևս մնացած» բառերը : Այս սյունյակի ճիշտ վերնադիրը պետք է լինի «նրա թվում ձայնագործկներ» :

14-րդ սյունյակում ցույց են տրվում միասին արտելի վոչ մի վարձու բանվոր չունեցող անդամները և այն անդամները, վոր վարձու բանվոր ունեն միայն դյուլատնտեսության մեջ :

15-րդ 16-րդ սյունյակներում ցույց են տրվում արհետների մեջ մեկ կամ յերկու բանվոր ունեցող անդամները :

Յեթե, արտելի մի քանի անդամներին հնարավոր

չե 1-ից մինչև 10-դ սյունյակներում հիշված վորեւ խմբերից մեկում զետեղել, պետք է գծել նոր հասուկ սյունյակներ համապատասխան վերնագրով կամ փոխել բաց մնացած սյունյակների վերնագրերը :

Տախտակ № 5

Այս տախտակի առաջին տողում ցույց է տրվում վարչության բալոր անդամների ընդհանուր թիվը, թեկուզ դրանցից մի քանիսն արտելում վոչ մի մշտական աշխատանք տանելիս չլինեն և միայն վարչության նիստերին մասնակցելիս լինեն :

2-րդ տղում ցույց են տրվում վարչության միայն անդամները, զորոնք ստանում են մշտական վարձատրություն վարչության անդամի պաշտոնի համար :

Տախտակ № 6

Այսակադ տեղեկություններ տրվում են միայն այն անձանց մասին, վորոնք սպասարկում են արտելի արտադրությանը : Դրանց թվին են պատկանում ճարտարապետները արտադրական ձեռնարկումներում, ճառայողները գրասենյակներում, պահեստներում, խանութներում, դռնապահները և հավաքարարները : Այս տախտակում պետք է առանձին տողով ցույց տալ փոխադրողներին համաձայն 3-րդ տախտակի բացատրության : Արտադրության մեջ զբաղված բանվորական ուժը այս տախտակում հաշվի չի առնվազում :

Տախտակ № 7

Տարեհաշվետվության մեջ այս տախտակի վերնագիրը սիալ և գրված-«ընդհանուր տեղեկություններ կապիտալ չինարարության մասին» : Վերնագիրը պետք

ե ուղղել հետևյալ ձևով. «ընդհանուր տեղեկություններ կապիտալ ներդրումների մասին»:

Ա. սունդյակում հիշատակվում են այն բոլոր կապիտալ ներդրումները, վոր արտելը կատարել է հաշվետու տարրում: Այդ հիշատակման մեջ յուրաքանչյուր ձեռնարկի համար մանրամասն կերպով պետք է ցույց տրվի, թե ինչի համար են կատարված այդ ներդրումները: Ահա մի քանի որինակներ, թե ինչպես պետք է լրացնել Ա. սյունյակը.

1. Յերեք աղյուսագործարանների չորանոցների շենությունը

2. Պատրաստի արտադրանքների պահեստի շինությունը

3. Յերկու ձի գնելու համար

4. Փայտանյութեր փոխադրելու 20 ուժանոց արակտորի գնելու համար

5. Արհեստանոցի հիմնական վերանորոգության համար

6. Արտելի զրասենյակի հիմնական վերանորոգության համար

7. 12 նոր արիկուտաժի մեքենաներ գնելու համար

8. Ելեկտրական մատոր գնելու համար

Այս տախտակի Ա. սյունյակը պետք է հատուկ ուշադրությամբ և մանրամասն լրացնել, վորովհետեւ այս տեղեկությունների հիման վրա Միության արտելների կապիտալ ներդրումները պետք է բաժանե հետեւյլ խմբերի.

ա. Նոր չենքի կառուցում կամ գնում.

բ. Արտադրության սարքավորման-մեքենաների, դագգյահների և այլ ինվետարի գնում և կահավորում.

գ. Շենքի կապիտալ վերանորոգում.

դ. Կահավորման կապիտալ վերանորոգում

յ. Արտադրության լայնացում կամ վերակառություն:

Ցեթե ծրագրով նախատեսնված աշխատանքը չի վերջացել հաշվետու տարրում, օդ-դ սյունյակից մինչև 16 ցույց են տրվում բոլոր միջոցները, վոր ստացված են կապիտալ ներդրումների համար աշխատանքի սկզբից, իսկ 11-դ և 12-դ սյունյակներում ցույց են տրվում սեփական միջոցները, վոր փաստորեն ծախված են աշխատանքի սկզբից:

6-դ սյունյակի և 11-դ ու 16-դ սյունյակների ընդհանուր գումարի պարբերությունը ցույց է տալիս կապիտալ ներդրումների չորագործված փոխառու միջոցների մնացորդը:

Տախտակ № 8

Այս տախտակում ցույց են տրվում նյութերի շրջանառությունները:

1. Արտադրության սկզբնական հումույթը

2. Կիսաֆարբեկատները

3. Արտադրության ոժանղակ նյութերը.

4. Վառելիքն այն արտադրություններում, վորտեղ նրա ծախար արտադրանքի համեմատությամբ բավական մեծ և, ինչպես, որինակ, աղյուսագործության մեջ և այլն: Այս տախտակում չեն գրվում սարքավորումը, չենքերի կառուցման և վերանորոգման նյութերը, փաթեթը, հացավուրածը և այլն անդամներին մատակարարելու սպառողական ապրանքները: Այս արքանքների և նյութերի շրջանառությունը ցույց ետք-

վում 9-րդ տախտակում : Ներքին շրջանառությունները չպետք ե անցնեն այս տախտակով : Այդպիսով , այս տախտակը լրացնելու համար հաշվառահական տվյալների ապրանքների հաշվից պետք ե գուրս ձգվեն . 1 այն կիսաֆարբիկատների արժեքը , փոր արտադրվել են արտելում արվել են իրեն արտազերությանը հետադարձ բամակության համար . 2 . այն նյութերը , փոր վերադարձվում են Միությանը և այլ մատակարարություններին կամ որատիերատուններին . 3 . այն նյութերը , փոր արտելի մեկ ձեռնարկից փոխադրվում ե մյուսը և 4 ստորևնուն , այսինքն հաշվառահական սխալ կրանցումների ուղղումը :

Առաջին տեղում գրվում է սեփական նյութերի չքանառությունը :

Յերկրորդ տողում ցույց է տրվում պատվիրատունների նյութերի շրջանառությունը : Բայ վորում պատվիրատուններ հաշվում են այն կոնտրագենաները , փորոնք տալիս են արտելին նյութեր առանց ստանալու նրանց արժեքը , այն պարմանով , փոր արտելը յետ վերադարձնի իրենց այդ նյութերից ստացում արտադրանքները , ստանալով ըստ սահմանած պարմանագով վերամշակության համար հատուկ վարձատրություն : Յեթե պատվիրատուն չի գնահատել իրեն նյութերը , այնուամենայնիվ արտելը պետք ե գնահատի պետական մեծածախ գներով և ցույց տա 8-րդ տախտակի յերկրորդ տողում : 2-րդ սյունյակում հաշվառման են յենթարկվում այն նյութերը , փոր արտելը ստացել և իր Միությունից :

3-րդ սյունյակում գրվում են ովտամարմիններից և այլ կաղմակերպություններից ստացած նյութերն

այն գեղքում , յեթե արտելը ստացել ե ինքնուրույն կերպով առանց Միության , իսկ յեթե Միության միջոցով են տացված , ցույց են տրվում 2-րդ սյունյակում : 5 , 6 և 7 սյունյակներում հաշվառման են յենթարկվում մասնավոր անձերից ստացված նյութերը :

Հատ լորում 7-րդ սյունյակում ցույց են տըրվում ապլանքառուներից գնված նյութերը , մեծ պարտիաներով ձեռնարկատերերից պատվերներ ընդունելու , իսկ 5-6 սյունյակներում գրվում են այնպիսի բանավորների հետ կատարած շրջանառությունը , փորոնք վոչ ապրնառու յեն և վոչ ել ձեռնարեկատեր , բայց ծախում են արտելին իրենց մշակած կամ ձեռք բերած նյութերը կամ թե չե արտելին պատվեր են տալիս իրենց դործածության համար արտադրանքներ պատրաստելու : 2-ց մինչեվ 9-րդ սյունյակն առաջին տողում նյութերը ցույց են տրվում հաշվի գնով , իսկ գնման վերադիր հախսերը առանձնացվում են 10-րդ սյունյակում :

8-րդ սյունյակում ցույց է տրվում վոչ թե բոլոր արտադրված կիսաֆարբիկատների արժեքը , այլ միայն նրանց մնացրդները տարեկերծում : Արտելի վերամշակած և բաճառած կիսաֆարբիկատները ցույց են տրվում մոտքում—10-րդ տախտակի 2 , 3 և 4 սյունյակներում : յելքում—միեւնույն տախտակի 13-րդ և 18-ից մինչև 23-րդ սյունյակներում :

20-ից միչեվ 22-րդ սյունյակների առաջին տողում տրվում այն յութերի վաճառքի գինը , փոր ցույց և արված ինքնաժեքով 16-րդ սյունյակում : 20-ից մինչեվ 22-րդ սյունյակների յերկրորդ տողում վոչ մի գումար չի կարել ցույց տալ—այս սյունյակների գլխին

սխալմամբ տպված «և հանձնված է», այս բառերը պետք ե ջնջել:

Նյութերի մանրածախս վաճառքը յեզս պետք ե մտցնել 8-րդ տախտակի 16-րդ (ինքնարժեքով) 20-րդ (վաճառքի գնով) սյունյակենրը, իսկ 11-րդ տախտակուր նյութերի մանրածախս վաճառքը յերկրորդ անդամ պետք ե ցույց տալ պատրաստի արտադրանքների և այլ ապրանքների վաճառքի հետ:

1 և 12-րդ սյունյակների գումարը հավասար պետք է լինի 18 և 18-րդ սյունյակների գումարին: 16 և 20-րդ սյունյակների տարրերությունը ցույց ե տալին նյութերի վաճառքի անդուստ ոգուտը կամ վնասը:

Տախտակ № 10

Այս տախտակը լրացնելիս պետք ե ղեկալարվել 8-րդ տախտակի համար տրված ցուցմունքներու և հետեւյալով:

1-ից մինչեւ 4-րդ և 12-ից մինչեւ 17-րդ սյունյակ ները ներառյալ յերկորդ տողում պատվիրատաւների նյութերից պատրաստված արտադրանքների արժեքի մեջ հաշվում են վոչ միայն նրանց վերամշակության ծախսերը, այլ նաև գտավերառուների նյութերի արժեքը: 18-ից մինչեւ 23-րդ սյունյակներում պատվիրատաւների նյութերից ստացված արտադրանքների արժեքի մեջ մըտցում են արտելին հասանելիք վարձատրությունը, ավելացրած դրան նաեւ այդ արտադրանքների վրա ծախսված պատվիրություների նյութերի արժեքը:

Դնելու վերադիր ծախսերը ցույց ցեն տրվում 10-րդ սյունյակում այնպես, ինչպես և նյութերի համար 8-րդ տախտակում:

Պատրաստի արտադրնաքների ուղարկելու և դընորդներին ու պատվիրատաւներին հանձնելու ծախսերը, իբր ընդհանուր կանոն, կատարվում են այդ անձանց հաշվին, բայց յեթե արտելն իր հաշվին կատարել ե սյդպիսի ծախսեր, դրանք չպետք ե անցկացվեն 10-րդ սյունյակում: Այդ ծախսերն անց են կացվում վաճառքի գերեստի հաշվին:

13-րդ սյունյակում վաճառքի ըրջանառությունն ինքնարժեքով պետք ե ցույց տրվի, հանելով վաճառքի վերադր ծախսերը, այլապես 1 և 12-րդ սյունյակների գումարը հավասար չի լինի 16 և 17-րդ սյունյակների գումարին:

Տախտակի ներքեվում ծանոթության մեջ պետք ե անել հտեւյալ մակագրությունը «պատրաստի արտադրանքերի վաճառքի վերադիր ծախսեր ուռելի: Այդպես պետք ե վարվել նաև նյութերի վաճառքի վերադիր ծախսերի նկատմամբ (8-րդ տախտակի, 16-րդ սյունյակ):

2,3 և 8-րդ սյունյակներում ցույց ե տրվում արտելի գումարած պատրաստի արտադրանքների և կիսափարիկանտների արտադրական ինքնարժեքը:

Յթե արտելի պատրաստած կիսափարիկատները նրա գքերում ձեվակերպված են իրե պատրաստի արտադրեքներ և բաց են թողնվել արտադրությանը հետագավերամշակության համար, այդ ըրջանառությունը վորպես ներքին, 10-րդ տախտակում ցույց չի տրվու: 14-րդ սյունյակը պետք է ջնջել, նա այս տախտակու սիալմամբ ե տպվել: Այս տախտակում ցույց չպետք արվեն նաև մյուս ներքին ըրջանառությունները, որոնց մասին ասված և 8-րդ տախտակի բացաւրության մեջ:

Տախտակ № 11

Այս տախտակի առաջին տողում ցույց է տրվում մանրածախս խանութների թիվը, յեթե արտելը մանրածախս առելվուր և անում :

Յերկրորդ տողում գրվում է տարեկան մարդախս չըշանառության գումարը վաճառքի դնութիւնը : Եյս չըշանառության մեջ են մտցվում նաեւ 8-րդ (Յ և 20-րդ սյունյակները) և 10-րդ տախտակների համազատասխան 13 և 23-րդ սկսնյակները :

Տախտակ № 12

Ինչպես այս, այնպես և հետեւյալ 1: և 14-րդ տախտակները լրացնելիս, պետք է ոգտվել նյութերի և պատրաստի արտադրանքների անվանացուցափությունը : Բոլոր մանր անվանացուցակի մեջ չէիցված յութերը պետք է համարել այլ և ցույց տալ նրանց տախտակի գերջին տողում միայն գումարով :

Այս տախտակում ցույց է տրվում արտելլ գրսից ստացած նյութերը և այլ կիսաֆարբիկոտանը : Սեփական արտադրությունից ստացված կիսաֆարբիկատները 12-րդ տախտակում չեն գրվում (12, 5 և սյունյակներում) : Այդ կիսաֆարբիկատները պետք է ցույց տրվեն 14-րդ տախտակի 1-ից մինչև 8-րդ սյունյակներում : Այդ պատճառով ել ընդհանրապես 12-րդ տախտակի 5 և 6-րդ սյունյակները կմնան բաց :

2-րդ սյունյակի գումարը հավասար պետք է լինի 8-րդ տախտակի 12-րդ սյունյակին :

4-րդ սյունյակի գումարը հավասար պետք լինի 8-րդ տախտակի 2-րդ սյունյակին, 8-րդ սյունյակի գումարը պետք է հավասար լինի 8-րդ տախտակի, 4, 5,

և 7 սյունյակների յերկրորդ տողում ցույց տրված չըշանառութունների գումարին :

Տախտակ № 13

12-րդ տախտակի բացատրության մեջ ասված և, վոր արտելի սեփական արտադրությունից ստացված կիսաֆարբիկատները պետք է ցույց տրվեն միայն 14-րդ տախտակում : Այդ պատճառով ել չիցված կիսաֆարբիկատների բաց թողնումն արտադրությանը պետք է գրավի 14-րդ տախտակի 13 և 14-րդ սյունյակներում, իսկ 13-րդ տախտակում ցույց են տրվում այն հումույթները նյութերը կիսաֆարբիկատները, վորոնք ստացվել են գրսից և նշանակել են 12-րդ տախտակում կամ տարեսկզբում մնացել են արտելի պահեստում :

Յեթե արտելն ունի մի քանի արտադրություններ, նյութերի բաց թողնումը ցույց է տրվում յորաքանչյուր արտադրության համար առանձին, թեկուզ այդ արտադրությունների համար ծախսված լինեն միատեսակ նյութեր : Որինակ, յեթե արտելը զբաղվում է ջուրհակությամբ և հյուսվածագործությամբ թելի ծախսը ցույց է տրվում ամեն մի արտադրության համար չոկ : Փայտագործության մեջ առանձին ցույց են տըրպում փայտի ծախսը բոլոր ճյուղերի համար առանձին սուանձին և այլն :

Ա սյունյակում արտադրության անունը և Բ սյունյակում նյութերի անունը ցույց են տրվում համաձայն նյութերի և պատրաստի արտադրանքների ստորագրաժանումների (կլասիֆիկացիայի) :

Բ սյունյակում յուրաքանչյուր արտադրության համար նախ գրվում է այն նյութերը, վոր ցույց են տըրպում փայտի ծախսը բոլոր ճյուղերի համար առանձին սուանձին և այլն :

ված ստորաբաժնումի մեջ, իսկ մնացածները՝ «այլ նյութերի» մեջ միասին :

Յուրաքանչյուր արտադրության համար տրվում է առանձին գումար, իսկ տախտակի վերջում բոլորի համար :

Տախտակ № 14

Այս տախտակը լրացնելիս պետք է զեկավարվել 12 և 13-րդ տախտակների բացատրություններով :

10 և 16-րդ սյունյակների գումարը հավասար պետք է լինի 10-րդ տախտակի 5 և 17-րդ սյունյակներին :

Տախտակ № 15

Արհեստագործական արտելներում կարող են լինել յերկու տեսակ ծախսեր . նրանցից մի քանիսը տարվա ընթացքում պետք է անցկացվեն արտադրության հաշվին և մացվեն ինքնարժեքի մեջ-դրանք արտադրական, ցեխային և ընդհանուր գործարաններին ծախսերն են, իսկ մնացածները կապված են արտադրանքների և նյութերի վաճառքի հետ և ինքնարժեքի մեջ չեն մացվում-նրանք մինչեւ տարեվերջը դրվում են առեվտրական ծախսերի հաշվում, իսկ տարեվերջում անց են կացվում ոգուտների և վնասների հաշվին: 15-րդ տախտակում արտադրական ծախսերի համար հատկացված են 2, 3, և 4, իսկ առեվտրական ծախսերի՝ 5-րդ սյունյակները:

Յերկու ծախսերի գումարը գրվում է առաջին սյունյակում: Յեթե արտելը զբաղվում է միայն արտադրությամբ և իբեն ամրող արտադրությունը հանձնում է Միությանը կամ վերջինիս կարգադրությամբ այլ հիմնարկներին և կազմակերպություն-

ներին, արտելի բոլոր ծախսերը համարվում են արտադրական, բացառությամբ հետեւյալ ծախսերի. (արհեստագործական, հարկ ըրջանառությունից, վորվարել և Միությունը և գրել արտելի հաշվին. 2 վրձարփած կոմիսիան և անցկացված վաճառքի հաշվին, այսինքը Միությանը տրված մասնահանումը և 3. կոմիսիայից դուրս ապրանքների վաճառքի այն ծախսը, վորպիսին միությունը գրել է արտելի հաշվին, որինակ, փաթեթի, պահպանման և ապահովագրման ծախսերը):

Այն արտելը, վոր սեփական արտադրություն չունի և կատարում է գնման, պատրաստի արտադրությունների վաճառման ու իր անդամներին նյութեր մատակարարելու գործառքներ, ունի միայն առեվտրական ծախսեր, վոր անց են կացվում ոգուտների և վրհասների հաշվին (տարեվերջում):

Այն արտելները, վորոնք ունեն սեփական արտադրություն և կատարում են առեվտրական գործառքներ, ծախսերի մի մասը, վոր հիշատակված են մեկից մինչեւ 16-րդ սյունյակներում, անց են կացվում արտադրության հաշվին 2, 3 և 4-րդ սյունյակներում և մի մասն ել առեվտրական ծախսերի հաշվին 5-րդ սյունյակում համաձայն գործառքներին և արտադրական ծախսերի նշակության:

Արտադրական ծախսերի բաժանումը ցեխային և ընդհանուր գործարաններին ծախսերի կատարվում է այն գեպքում, յերբ արտելը տարվա մեջ նրանց հաշվառման և յենթարկել առանձին, հակառակ գեպքում բոլոր արտադրական ծախսերը ցույց են տրվում 4-րդ սյունյակում ընդհանուր գումարով:

Ծախսերն այս կամ այն հոգվածով անցկացնելու
շամար պետք է զեկավարել հետեւյալ կանոններով:

Յերկրորդ հոգվածի «Բանվորական ուժի և սպա-
սարկող անձնակազմի պահպանման լրացուցիչ ծախսե-
րը» և 3-րդ հոգվածի «Աշխատավարձի վրայեկը» անց են
կացվում արտելում աշխատավարձի բոլոր անձանց լրացու-
ցիչ ծախսերը և վրայեկները, նրա թվում նաև արտա-
դրության մեջ գրադադաներինը:

Այդ հանդամանքն աչքի առաջ պետք է ունենալ
12-րդ տախտակի 18-րդ սյունյակը լրացնելիս և ը-
պետք է մտցնել աշխատավարձի մեջ լրացուցիչ ծախ-
սերը և վրայեկները:

Բանվորական ուժի պահպանման լրացուցիչ ծախ-
սերին են պատկանում.

ա) չոգտագործված արձակուրդի դրամական փափ-
հատուցումը (կոմպենսացիան).

բ) ծառայությունից ազատվելու փոխառուցման
նպաստը.

գ) բանվորներին և ծառայողներին աշխատանքի
հրավիրելու ու տեղափոխությունների հետ կապված
ծախսերը (որապահիկներ, փոխադրությունները և
այլն).

յե) Բանվորներին և ծառայողներին տրված բնակա-
րանների վարձը.

Աշխատավարձի վրայեկին են պատկանում.

ա) արտելի անդամների և վարձու բանվորների
համար փոխողնության դանձարկդին տրված մու-
ծումները.

բ) Արտելի անդամներին սպասարկող հիմնարկ-
ների պահմանման մասնահանումները (ակումբներ,
մոուրներ և այլն).

դ) բնակարանային շինարարության մասնահա-
նումները:

Երրորդ հոգվածը, ինչպես յերեվում է նրա անունից
վերաբերում և միայն արտադրական ձեռնարկներին:
Հետեւյալն այս հոգվածի 5-րդ սյունյակում վոչ մի
ծախս չի լինել:

14-րդ հոգվածի վճարված կոմիսիան և արտա-
դրանքների վաճառքի վրայեկը վոչ մի կերպ չի կա-
րուի անցկացնել արտադրության հաշվին և ամբողջա-
պես պատկանում և 5 սյունյակին:

Արտելի նյութեր և ապրանքներ գնելու համար
Միությունը կամ այլ հիմնարկներին և մասնավոր
անձանց վճարած կոմիսիան 15-րդ տախտակում բոլո-
րովին չի գրվում—այդ կոմիսիան նյութերի և ապրանք-
ների գնման վերադիր ծախսերին են պատկանում և
մյուս վերադիր ծախսերի հետ ցույց են տրվում 8-րդ
տախտակի 10-րդ սյունյակում և 10-դ տախտակի
10-րդ սյունյակում, իսկ 9-րդ տախտակին վերաբերող
գնման հետ կապվածները մտցնում են այդ առարկանե-
րի ինքնարժեքի մեջ և վոչ մի տեղ հաշվետվության
մեջ ցույց չեն տրվում.

Յեթե արտադրանքների վաճառքի հարկը (հոգ-
ված 12) և վճարված կոմիսիան (հոգված 14) գրքե-
րով անց են կացված վոչ ծախսերի հաշվին, այլ վա-
ճառքի, այդ բոլոր ծախսերը պետք է անցկացնել 15-րդ
տախտակի սյունյակի 12 և 14-րդ հոգվածներում.

Բայս վորում պետք է հիշել, վոր 17-րդ տախտա-
կը (վնասների և ողուտների հաշվի) լրացնելիս պետք է
կամ պակասեցնել վաճառքի ընդհանուր վնասների գու-
մարը կամ ավելացնել անդուս յեկամուտների գումարը-

այլապես վնասների և ոգուտների հաշիվը ճիշտ չի
լինիլ:

15 Հոդվածում ապրանքների և նյութերի պակա-
սորդը անց և կացվում ընդունված բնական պակսորդի
սահմաններում:

Ընդունված չափից բարձր, ավելի յեղա-
ցուցմը և տարրերային աղետներից առաջացած արտա-
դրությունների և նյութերի կորուստը 15-րդ տախտա-
կում ցույց չե տրվում և յեթե առաջացած այդ վնաս-
ները չեն բոնազանձվում մեղավոր անձերից կամ ծած-
կվում ապահովագրական հատկացումներով, անց և
կացվում 17 տախտակի Բ սյունյակի աղատ տեղերից
մեկում:

Ընդունված նորմաններից բարձր յեղած պակսորդ-
ները, ամբողջապես անց են կացվում արտադրության
հաշվին, իսկ պատրաստի արտադրաքները՝ առեվտրա-
կան ծախսերի հաշվին (15 տախտակի 5-րդ սյունյակ):

Յեթե տարվա մեջ արտելի հաշվապահությունը
տարվել է ճիշտ և արտադրական ծախսերը չեն խառնը-
վել առեվտրական ծախսերի հետ, 4-րդ սյունյակի գու-
մարը պետք է ցույց տա արտադրական ծախսերի այն
գումարը, վոր արտադրական ծախսերի հաշվից փո-
խանցվել են արտադրության հաշվին:

Տախտակ № 16

Այս տախտակի տեղեկությունները վերցվում են
չքավորների կոոպերացման հատուկ դրամագլխի
(Փոնդի) հաշվից և այդ Փոնդի հաշվին փոխատվու-
թյունների հաշվից:

1, 2 և 4 սյունյակներում ցույց են տրվում այն
գումարները, վոր հաշվետու տարում սյունյակի վերնա-

գրում հիշված աղբյուրներից հատկացվել են այդ նպա-
տակին, այդ հատկացումների ընդհանուր գումարը
պետք է հավասար լինի Փոնդի շրջանառության կրեդի-
տի հաշվին:

3-րդ սյունյակում ցույց են տրվում այն գու-
մարները, վոր վերագարձվել են փայտվարներ մու-
ծելու համար Փոնդի հաշվին ստացած փոխառություն-
ների ձեգով:

Ստացած միջոցների ընդհանուր գումարը գրվում է
5-րդ սյունակում, վոր պետք է տա 1-ից մինչև 4-րդ
սյունակների գումարը: 6-րդ սյունակում ցույց են տր-
վում գյուղատնտ. կոլեկտիվացման ոգտին հատկաց-
ված, կամ հատկացվելիք գումարը, անկախ նրանից թե
նա հանված և Փոնդի հաշվից թե վոչ: Կոլեկտիվացման
ոգտին փաստորեն վճարած գումարները ցույց են տր-
վում 17 սյունյակում:

7-ից մինչ 11-րդ սյունյակներում ցույց են տրվում
այն գումարները, վոր հաշվետու տարում ծախսված են
փոխառությունները տալու համար: 11-րդ սյունյակի
գումարը պետք է հավասար լինի այն փոխառություն-
ների գերեալի հաշվին, վոր տարված են Փոնդի հաշվին:
12-ից մինչև 15-րդ սյունյակներում զրկվում են այն գու-
մարները, վոր արտելն ինքն է ծախսել կոոպերացման
և կոլեկտիվացման Փոնդից բացառապես չփափորներին
և բառուակներին կոոպերացնելու համար ընդհանուր
արհեստանոցներ կառուցելու և այլն: 16-րդ սյունյա-
կում ցույց են տրվում այն գումարները, վոր տրվել են
Միությանը չքավորներին կոոպերացնելու և կոլեկտի-
վացնելու Փոնդի համար:

Վնասի և ոգուտի հաշվը պետք է տա արդյունք (զուտ ոգուտ կամ վնաս) միայն հաշվետու տարվա գործառքների համար : Եթա մեջ չպետք է յերեվան անցյալ տարիների վոչ ոգուտները և վոչ վնասները, վոչ եւ հետադա տարիների ծախսերը և յեկամուտները :

Ծախսերը և վնասները նշանակվում են Ա սյունյակում այն ծախսերի գումարը, վոր դուրս ե բերված 15-դ տարիակի 5-րդ սյունյակում :

2. Բ սյունյակում շրջանառության այն գումարը, վոր գրված է յեղրափակման հաշվեկշու № 22 հաշվի կրեդիտին :

3. Գ սյունյակում առեվտրական և այլ գործառքներից առաջացա, վնասները, նաև հաշվետու տարվա պատահական վնասները :

Ոգուտի հաշվին գրվում են .

1. Ա սյունյակում առեվտրական և այլ գործառքներից ստացած յեկամուտները նաև հաշվետու տարվա պատահական յեկամուտները և

2. Բ սյունյակում տարեկերջում մնացած, չոպտագոածված պահեստները, վոր գրված են հաշվետու տարվա յեկամուտների հաշվին :

Հաշվետու տարվա դուրս ոգուտի կամ վնասի գումարը պետք է հավասար լինի յեղրափակման հաշվեկշում յուրյա տրված № 33 հաշվի գումարին :

ա. Հնդհանուր նկատողություններ .

Մանր արտելներ և հատկապես այն արտելները, վորտեղ հաշվապահությունը տարվում է ամերիկական ձեռ-

վի գրքերով, կարող են գլխավոր գրքում չունենալ հաշվեկշում հիշված ըոլոր հաշվեները : Այս գեղքերում ուետք է ոգուտի ոժանդակող գրքերի տվյալներից :

Յեթե յենթահաշվեների մեջ գժվար է ցույց տալ նրանց շրջանառությունները, պետք է զրել ըոլոր հաշվեների շրջանառությունների գումարները, բայց դրանց տարեսկզբի և վերջի սալդոները պետք է ցույց տալ անպայման տունձին :

բ. Այստեղ մեջ են բերվում հաշվեկշուի այն հաշվեները, վորոնք ամենաշատ կարիք ունեն ցուցմունքների :

5-րդ հաշվի : Միության փայտական դրամագլուխուների մուծումները լինում են յերկու տեսակ . ա. ըստ կանոնադրության և բ. ոգուտներից : Ըստ վորում կանոնադրության դրամագլուխուն գոյանում ե արտելների փայտամագլիք սահմանված մուծումներից (25 տոկ) : Ոգուտների հատկացումներն այն դրամարներն են, վոր արտելները պարտավոր են հատկացնել Միությանը 5 տոկոսի սահմաններում :

Ակտիվի այս հաշվին պասսիվում համապատասխանում է միության փայտական դրամագլիքի ուժեղացման հատուկ դրամագլիքի յենթահաշվը :

5-III Հաշվում նշանակվում են պահեստի դրամագլիքի հատկացումները, վոր մասնահանդիպում են ոգուտներից և արգում Համկոռպբանկին :

5-IV Հաշվում նշանակվում է այն գումարը, վոր մասնահանդիպում է ոգուտներից և արգում է Համկոռպբանկին յերկարատև փոխառության համար : Պասսիվում, այդ գումարը պետք է նշանակված լինի յերկարատեղ փոխառության հատուկ դրամագլիքի հաշվում (հաշվի 20 III-I)

7 Հաշվում գրվում ե բալոր ժամկետային պարտամուրհակների գումարը, բացառությամբ բողոքարկված մուրհակների, զոր ցույց են տրվում հասուկ 8-րդ հոդվածում :

Ի ապահովագրություն սուացած մուրհակները հաշվեկշռվ չ'պետք ե անցնեն և ցույց են տրվում արտահմիո հաշվում :

9-րդ հաշվի 1 կետում ցույց են տրվում սեփական պատրաստի արտադրությունների գումարներն ինքնարժեքով :

2-րդ կետում ցույց են տրվում պատվիրատունների նյութերից պատրաստա, արտադրությունները, զոր գույք են գրվել արտադրության հաշվից և տրվել պահստ :

Եթե այդ արտադրությունների մեջ մացված են նաև պատվիրատունների նյութերի արժեքը՝ դրա մասին պետք ե ծանոթություն գրել լուսանցքում :

10-րդ հաշվում ցույց են տրվում մյուս մացած ապրանքներն և նյութերն ինքնարժեքով, բացառությամբ սեփական խանութներում գտնվածներից, վարոնք ցույց են տրվում հասուկ 11 հոդվածում :

Արտադրության նյութերի մեջ պետք ե ցույց տալ վոչ միայն հումույթը և ոժանդակ նյութերը այլ և այն գործիքները, զոր մի տար յեն բանեցվում և դուրս դրվում ծախսի մեջ։ Սարքավորման առարկաներ վոչ միայն նրանք պետք ե հաշվել, զոր գործում են, այլ և մնում ե պահեստի մեջ։ Կազիտալ րիմոնտի կամ կառուցվող չենքերի համար ձեռք բերած կահավորումը ցույց ե տրվում 15-րդ հաշվում։

Տնտես- շինարարական նյութերը նրանք են, զոր մնում են պահեստում և դեռ չեն տրվել

շինարարության կամ վերանորոգության համար։ 10-րդ հաշվում ցույց ե տրվում այն տարան, վոր կա պահեստում և ապրանքի հետ գնում ե գնորդին, իսկ այն տարան, վոր արտելլ ոգտագործում ե մի տարուց ավել ժամանակ, ցույց ե տրվում, իբր գույք։

11-րդ հաշվում խանութում յեղած ապրանքները ցույց են տրվում նրանց վաճառքի գնով, իսը չվաճառքած ապրանքների վերադիրները ցույց են տրվում պաստիվի 23-րդ հաշվում։

12 և 13 հաշիվներում ցույց են տրվում արտադրության ծախսերը. այդ հաշվելիների մնացորդները պետք ե ցույց տան այն արտադրանքների վրա կատարած ծախսերը, զոր գեռ դուրս չեն գրված յեղել արտադրությունից։ Յեթե տարվա ընթացքում պատվիրատունների նյութերի արժեքն անց է կացվել արտադրության 13-րդ հաշվով, այդ մասին ծանոթություն պետք ե գրել լուսանցքում։

14-րդ հաշվում ցույց ե տրվում այն գույքը, զոր գործադրյում ե մեկ տարուց ավելի ժամանակ և ամօրտիզացիայի յև յենթարկվում։ Այն գործիքները, զոր սպագործվում են տարվա ընթացքում և ամօրտիզացիայի չեն յենթարկվում, գույքի հաշվում չեն գրվում, այլ ցույց են տրվում 28- հաշվում։

15-րդ հաշվում ցույց են տրվում չափարարված շինանյութերի և կապիտալ վերանորոգության ծախսերը, ըստ վորում ավարտված շինությունները և կապիտալ վերանորոգությունները փոխանցվում են գույքի հաշվին համաձայն նրանց վրա կատարած փաստական ծախսերի։

16-րդ հաշվում ցույց են տրվում միայն չքավորական գրամագլուխի փոխառվությունները։

18-դ Հաշվում «զանազան հիմնարկներ և անձինք» ում պետք է առանձին ցույց տալ գնորդների և մատակարարողների հաշիվները։ Ըստ վորում Միության հետ ունեցած հաշիվները այստեղ չեն գրվում, այլ ցույց են տրվում 17-դ հաշվում։

Հաշվեկշռում ստացված և արված կանխավճարների համար հատուկ հոդվածներ չկան, նրանց գումարները պետք է ցույց տալ 16,17 և 18 հաշիվներում։

18-դ հաշվում գրվում են բոլոր վարձու բանվորների և ծառայողների հետ ունեցած հաշիվները։ Արտելի աղամ բանվոր-ածառայողների հաշիվներն անց են կացվում 16-2 հաշվ։ 19-դ հաշվում գրվում են այն բոլոր հաշիվները, վոր սարեկերջում գույքացուցակագրման ժամանակ ձևաչփած են կասկածելի։

Կասկածելի պարտքերից պետք է տարբերել անհուսալիքները, վոր, պետք է գրվեն ոգուանների և վնասների գերետի հաշվին, ըստ վորում, յեթե յերեք տարի չի անցել, գուրս են գրում, թողնելով ամեն մի պարտքեց մեկ ոուրի կասկածելի պարտքերի հաշվում։

20-դ հաշվում ցույց են տրվում փաստացի մուծած փայտավճարները, փայտավճարների պարտքերն այստեղ չեն մտնում և ցույց տրվում արտակշիռ հաշիվներում։

Պահեստի գրամագլուխում ցույց են տրվում ինչպես արդեն մինչև ոգուաններից կատարած մասնահանումները, այնպես և ոգուաններից տրված գումարները։

Ըստ վորում վերջին գումարները տրվում են Համկառպահնկի հատուկ Փոնդին և ակտիվում ցույց են տլրվում 5-III հաշվում։

Զքափորության կոռպերացման հատուկ գրամագլուխում պետք է ցույց տալ, ինչպես սեփական միջոցները

(ողուանների մասնահանում) այնպիս և այդ նպատակայ Միությունից ստացած գումարները։

Յեթե արտելն ունի այդ յերկու գումարն ել, նա չըքալորական գրամագլուխությունների համար գուրս և դոկտի 1 սեփական մաս և փոխառու մաս։

21-դ հաշվում ցույց է արվում կատարած ամորտիգացիայի գումարը, բացառությամբ այն գումարների, վոր կապիտալ վերանորոգությունների համար գուրս և գրված ամորտիգացիայի փոնդից։

28-դ հաշվում պետք է առանձնացնել այն ծախսերը, վորը կատարված են հետագա տարիների համար, որինակ կապիտալի գումարը, վոր վճարված է մի քանի տարվա գույքի հիմնական վերանորոգության համար, վոր պետք է գուրս գրել ամեն տարի ընթացիկ ծախսերի հաշվին կամ հետագա տարվա համար վճարված տակոսները։

Հետագա տարվա յեկամուտները նրանք են, վոր ստացվում են հետագա տարիների հաշվին, որինակ, առաջուց ստացած տոկոսները։

29 Հաշվում ցույց են տրվում արտադրանքների մնյութերի վաճառքի գումարները, ըստ վորում գերետի աշվով անց են կացվում նրանց ինքնարժեքի գումարները։ Վաճառքի հաշիվը հետեւանքային է և նրա կրեդիտի սալդոն պետք է ցույց տա վաճառքից կամ ուրիշ նյութեր վերամշակելուց ստացած անզուտ յեկամուտը, յեթե վերջիներիս գործառները ձեակերպված են այս հաշվով։

30-դ հաշվում ցույց են տրվում յերկու տեսակի ծախսեր։

1-ին յենթահաշվում արտադրական ծախսերը, տարեկերջի հաշվեկշռում այս յենթահաշիվը սարդո չպետք

և ունենա, վրոպէստե տարեվերջում դրբերը փակելիս
այս ծախսերը անց են կացվում արտադրության հաշ-
վին:

Զ-ՐԸ /յենթահաշվում ընդհանուր առելքտրական ծախս
և բրը . այս յենթահաշվիվը յեկս տարեկերջում սալը՝
չպետք է ունենա, վորովհետև գրքերը փակելիս նրանց
պետք է փոխանցել ողուաների և միասների համեմ:

31-դ հաշվում ցույց են տրվում այն յեկամուտները, վորութիւն հետեւվանքային հաշիվների մեջ չեն մրտել: Տարեկերջում գրքերը փակելիս այս հաշվի սարդուն փոխանցվում ողջուաների և վնասների կուենածակի համար:

32-րդ հաշվում ցույց են տրվում գերեատում ոժանդակի ձեռնարկների բոլոր ծախսերի գումարները, կրեցիտում նրանց յեկամուտները։ Այս հաշվից սարդո չպետք է ունենա, վորովհետեւ տարեկերջում փոխանցվում ե ոգուտների և վնասների հաշվին։

33-դ հաշվի վնասների և ոգուտների 1-ին յենթահաշվում անցյալ տարիների՝ համար պետք է ցույց տալ կամ չծածկված վնասները (ակտիվ) կամ չբաշխված ոգուտները (պասսիվ)։ Հաշվետու տարվա համար ըլլուջնառության մեջ պետք է անց կացնել այն բոլոր գումարները, վոր ցույց են տրված 15-դ տախտակում։ Սարդոն պետք է ցույց տա կամ զուտ ոգուտը կամ վնասը։

Արտակշիռ հաշիվներում պետք է ցույց տալ այն արժեքները, վոր արտելին չեն պատկանում, այլ կատ միայն նրանց ոգտագործում է կամ պահպանում։ Բացի ցույց տրված արժեքներից, կարելի յէ դրել և այլ արժեքներ, վոր արտելին չեն պատկանում, և ապահովագրական պարտավորություններ։

Հաշվեկշռի տակ նշանակում են այն գումարները փոք անդամները պարք են փայտավճարի դիմաց։ Այդ

զումարները չպետք է ցույց տալ հաշվեկշռում, վորպիսպի իսկական գրամագլուխների գումարները չմեծանան:

Տախոսական № 19

Այս տախտակում գրվում են ըսլոր տեսակի կուլու-
կրթական և կենցաղային աշխատանքների տեղեկու-
թյունները: Բայց վորում առաջին սյունյակում ցույց են
տրվում կուլտ-կրթական աշխատանքների տեսակները
(անդրագիտության վերացման խմբակ 50 սովորողնե-
րով, վերջացրել 30-ը, ակումբ, ուր կան այսինչ խըմ-
րակները, կարմիր անկյուն, շարժական կինո, բաղիո,
մանկան մսուր 15 յերեխայով, հրապարակ, մանկապար-
տեկ, եքսկուրսիա քանի անգամ և կազմակերպել և վոր-
քան մարզ են մասնակցել, անսոստվածների բջիջ և այլն)
յերկրորդ սյունյակում ցույց են տրվում միայն այն
կազմակերպությունների թիվը, վոր գոյություն ունեն
արտելում, վերջում վորքան ծախս և արված նրանց
պահպանման համար, ցույց տալով հայտարարում թե
այդ գումարից վորքան և արված ուրիշ հիմնարկներին
այդ նպատակի համար ծախսելու (որինակ լուսաբանին
և այլն). որինակ ասենք արտելը ծախս և արել իր կար-
միր անկյան համար 75 ոռուրի և միեվնույն ժամանակ
ովքել և այդ նպատակով վորեե գումար 120 ոռուրի ու-
րիշներին, հիմնարկների թիվը գրվում է 1՝ հատ, ծախսի
սյույակում ցույց և տրվում այդ գումարը հետեւյալ
ձեվով ^{այ}₂₀ ու., վորի համարիչ ցույց և տախս ընդհա-
նուր ծախս, իսկ հայտարարը ուրիշներին արված
գումարը:

Այս տախտակում տրվում են տեղեկություններ արտելի անդամների անհատական ձեռնարկներում վերամշակած նյութերի մասին, վոր նրանք ստացել արտելից կամ նրա ոժանդակությամբ այն պայմանով, վոր պատրաստված արտադրանքները հանձնեն արտելին:

Այս տախտակում հաշվառման չեն յենթարկվում արտելի անդամների և գոչ անդամների արտադրանքները հետեւյալ գեղքերում 1. այն արտադրանքները, վոր պատրաստված են կողմնակի կերպով ձեռք բերված նյութերից 2. այն արտադրանքները, վոր թեկուզ պատրաստված են արտելից կամ նրա ոժանդակությամբ ստացած նյութերից, բայց, յեթե պայման չի դրված, վոր այդ արտադրանքներն անպայման հանձնվեն արտելին 3. այն արտադրանքները, վոր պատրաստվել են արտելի ընդհանուր արհեստանոցում այն հաշվառման և յենթարկվում ամբողջապես 21-դ տախտակում և 4. այն կիսաֆարբիկաները, վոր հետագայում հանձնում են ընդհանուր արհեստանոցին վերամշակությանը վերջնաշնորհ համար, այն նույնպես հաշվառման և յենթարկվում 21-դ տախտակում:

Յեթե արտելը ունի մի քանի տարբեր արտադրություններ, յուրաքանչյուր արտադրություն տեղեկությունը տրվում է առանձին առղում, հետո յել գումարվում էն բոլորը միասին: Առանձին արտադրություններ են հաշվում նրանք, վորոնք նախատեսված են ստորաբաժանման (կլասիֆիկացիայի) մեջ:

